



ԽԵԼԱՑԻ
ԱՐԵՎԻԿՆ ՈՒ
ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ
ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ
ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՊՈԱԿ



Հեքիաթ՝ նախադպրոցական տարիքի երեխաների համար
Հեղինակ՝ ԲՏԱՎ-ի մեթոդական բաժնի պետ Լ. Ստեփանյանը

ԵՐԵՎԱՆ 2025



Փոքրիկ քաղաքում ապրում էր մի խելացի ու հետաքրքրասեր աղջնակ՝ Արևիկ անունով: Նա սիրում էր գիրք կարդալ և շատ հարցեր տալ մեծերին:



Մի գեղեցիկ օր, Արևիկի մանկապարտեզ էին այցելել Սեյսմիկ պաշտպանության մասնագետները: Նրանք երեխաներին պատմեցին մի պատմություն երկրաշարժի մասին:



Երբ Արևիկը վերադարձավ տուն որոշեց պատրաստվել երկրաշարժին:

- Հայրիկ, - ասաց Արևիկը, - իսկ դու գիտե՞ս ինչպես պատրաստվել երկրաշարժին:
- Հայրիկը ժպտաց և լուրջ պատասխան տվեց.
- Դե առաջինը՝ հավաքենք կարևոր իրերով պայուսակ:

Արևիկն ու հայրիկը միասին պատրաստեցին «խելացի պայուսակ», որի մեջ դրեցին՝

- ◆ ջուր
- ◆ սնունդ
- ◆ լապտեր
- ◆ մարտկոցով ռադիոընդունիչ
- ◆ բժշկական պարագաներ
- ◆ կարևոր փաստաթղթերի պատճեններ
- ◆ սուլիչ
- ◆ տաք հագուստ
- ◆ հիգիենայի պարագաներ
- ◆ Արևիկի սիրելի գիրքն ու փոքրիկ խաղալիքը:



Արևիկը սովորել էր նաև կարևոր համարներ՝ 911-ն ու 112-ը: Հայրիկը դրանք գրեց մի թղթի վրա և դրեց «խելացի պայուսակ»-ի մեջ:



Հետո հայրիկը, մայրիկը և Արևիկն որոշեցին, որ եթե երկրաշարժ տեղի ունենա և նրանք այդ ժամանակ լինեն տարբեր վայրերում, կհանդիպեն հարևան բակի այգում գտնվող ընդարձակ ազատ տարածքում, քանի որ իրենց տան մոտ ընդարձակ ազատ տարածք չկա:

Արևիկը մայրիկին խնդրեց ցույց տալ տան ամենաապահով վայրերը՝



- ներքին ամուր պատի անկյուններն ամենաապահովն են, - ասաց մայրիկը:



Քանի որ Արևիկի մահճակալը գտնվում էր պատուհանի մոտ, և գլխավերևում կար մեծ շրջանակով նկար, հայրիկը մահճակալը տեղափոխեց ամուր պատի մոտ և հանեց շրջանակով նկարը:



Հայրիկը բոլոր պահարաններն ու ծանր իրերն ամրացրեց պատերին և հատակին, որ երկրաշարժի ժամանակ չընկնեն և չվնասեն իրենց:

Մի օր հանկարծ ողջ տունը դողդաց:

Տունը շարժվում էր: Արևիկը խուճապի չմատնվեց և չվախեցավ, որովհետև նա արդեն սովորել էր երկրաշարժից պաշտպանվելու կանոնները:

Նա հիշեց՝ եթե նկուղային, 1-ին կամ 2-րդ հարկում լինեմ՝ կվազեմ դուրս և կհեռանամ շենքի արտաքին պատերից, կկանգնեմ, ինչպես նախապես արդեն ծնողներիս հետ որոշել էի, հարևանի պարտեզի մոտ գտնվող ընդարձակ ազատ տարածքում և կսպասեմ ծնողներիս: Բայց հիմա վերևի հարկում եմ:

Նա արագ վազեց դեպի ամուր պատը և գլուխը ծածկեց բարձով:






- Արևիկը հանկարծ հիշեց, որ Սեյսմիկ պաշտպանության մասնագետները խորհուրդ էին տվել նաև եթե ամուր պատի մոտ գտնվում է ամուր սեղան կամ մահճակալ կարելի է նաև երկրաշարժի ժամանակ մտնել դրանց տակ և ձեռքերով ամուր բռնել սեղանի կամ մահճակալի ոտքերից, նա զգուշությամբ շարժվեց դեպի մոտակա սեղանը ու պատսպարվեց սեղանի տակ, ամուր բռնելով սեղանի ոտքերից:



Երկրաշարժի ժամանակ բախում խաղացող երեխաները՝ Արամն ու Նելլին
հետևեցին մեծերին և վազեցին հեռու՝ շենքերից, ծառերից,
էլեկտրահաղորդալարերից, սյուներից և մանկական ճոճանակներից:



Շատ ճիշտ արեցիք, – գոչեց Արամի և Նելլիի պապիկը, երբ տեսավ նրանց՝ բաց տարածքում կանգնած:



Երբ ցնցումը դադարեց, բոլորը, ովքեր վերևի հարկերում էին արագ դուրս եկան և տեղափոխվեցին դեպի Արևիկենց բակի հարևանությամբ գտնվող այգու ընդարձակ ազատ տարածք: Ամբողջ ընտանիքն ու հարևանները հավաքվեցին այնտեղ, քանի որ այնտեղ ապահով էր: Բոլորը սպասում էին երկրաշարժի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությանը:

Արևիկը պատմեց նաև, թե ինչ անել, եթե երկրաշարժի ժամանակ ավտոմեքենայի մեջ ես:

- Երբ մեքենայի մեջ ես, պետք է վարորդին խնդրես, որ կանգ առնի բաց տարածքում՝ կամուրջներից, շենքերից և էլեկտրասյուներից հեռու, բայց կարող ես նաև չիջնել մեքենայից, քանի դեռ ցնցումը չի ավարտվել, – ասաց նա ընկերներին:

- Իսկ մետրոյում, – հետաքրքրվեց տղաներից մեկը:

- Եթե մետրոյում ես, ապա մի ձեռքով ամուր բռնի՛ր ձողից, մյուս ձեռքով պաշտպանի՛ր գլուխդ, իսկ մետրոյի կայարանում լսի՛ր և կատարի՛ր բարձրախոսով հնչող հրարանգները.

Արևիկն ավելացրեց՝

- Երբ երկրաշարժի ժամանակ դրսում եք, երբեք շենք չմտնեք, դա շատ վտանգավոր է:

- Երբեք մի վազեք տանիք կամ աստիճաններով վերև, դա նույնպես վտանգավոր է:

- Իսկ վերելա՞կը, – հարցրեց Արամը:
- Վերելակը նույնպես վտանգավոր է երկրաշարժի ժամանակ: Չօգտվե՛ք վերելակից:

Նա նաև հիշեց մեկ կարևոր բան.

- Եթե երկրաշարժը գիշերը լինի, մի՛ օգտվեք էլեկտրական անջատիչից, կրակայրիչից. գազի արտահոսք կարող է լինել, փոխարենը օգտագործեք լապտեր:
- Ի՞սկ եթե երկրաշարժից հետո ինչ-որ մեկը փլատակների տակ է,
- հետաքրքրվեց տատիկը:
- Պետք է բարձր ձայնով կապ հաստատի դրսում գտնվողների հետ, որ փրկարարները շուտ գտնեն:




- Այդ ընթացքում պաշտոնապես հաղորդում ստացան, որ էլ ուժեղ հետցնցումներ չեն լինելու,



- Արևիկի ընտանիքն ու հարևանները խիստ զգուշությամբ վերադարձան տուն:



Արևիկը նայեց շուրջը՝ արդյոք չե՞ն թափվել վտանգավոր հեղուկներ, գազի
հոտ կա՞: Ամեն ինչ կարգին էր:



Հաջորդ օրը բոլոր երեխաները եկան Արևիկի մոտ ու խնդրեցին, որ Արևիկը իրենց էլ սովորեցնի երկրաշարժից պաշտպանվելու կանոնները:

Այդ օրվանից հետո, Արևիկը դարձավ բակի բոլոր երեխաների համար օրինակ:
Նա սկսեց պատմել իր փորձը, սովորեցնել մյուսներին ու երբեք չմոռացավ այն
կանոնները, որոնք պետք է կիրառել՝

- Երկրաշարժից առաջ
- Երկրաշարժի ժամանակ
- Եվ երկրաշարժից հետո:

Իսկ դու պատրաստ ե՞ս:

Զգույշ եղի՛ր, սովորի՛ր ու օգնի՛ր մյուսներին: